

ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ ԿԴԱՌՆԱՐ 62 ՏԱՐԵԿԱՆ

Նոյեմբերի 25-ը ՀՀ և ԱՀ ազգային հերոս, Արցախյան պատերազմի ակտիվ մասնակից, հայազգի հրամանատար Սոնթե Մելքոնյանի ծննդյան օրն է: Նա կդառնար 62 տարեկան: Օրվա առթիվ Արցախի պետական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության և ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել է միջոցառում:

Միջոցառման ընթացքում ուսանողները ելույթներ են ունեցել հերոսի կյանքի, գործունեության և մարտական ուղու մասին՝ արժևորելով արցախյան ազատամարտում նրա ունեցած դերը:

Ուսանողուհի Տաթև Սարգսյանը իր ելույթում

ԱՐՊՀ ՌԻՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ ԵՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ

Երևանի պետական համալսարանում կազմակերպվել էր մշակութային միջոցառում, որի ընթացքում պարզևատրվել են 2019 թվականի հունիսի 10-ից 14-ը ԵՊՀ 100- ամյակի առթիվ կազմակերպված «Անկախության սերնդի ծայրը» բիենալեում հաղթող ճանաչված ուսանողները: Միջոցառմանը ներկա էին Հայաստանյան բուհերի և Արցախի պետական համալսարանի այն ուսանողները, որոնք մրցանակային տեղեր են զբաղեցրել բիենալեի հանրապետական փուլում: Բիենալեի հանրապետական փուլում ԱրՊՀ-ից մասնակցած ուսանողներից մրցանակային երրորդ տեղը զբաղեցրել են Մարինե Սարգսյանը (գրական մրցանակ), Ալիսիա Դադայանը (ասունը) և Մարիամ Ասրյանը (երգ):

«Սրտատրոփ սպասում էինք այդ օրվան, բայց ոչ

ընդգծել է, որ Սոնթեի՝ անձնագրով, մարդկային բոլոր առաքինի որակներով օժտված կերպարը այսօր օրինակ պետք է դառնա յուրաքանչյուր հայի համար: «Հայ մարդու կյանքը աներկբայորեն իմաստավորված է նաև մոնթեների գոյությամբ: Հայրենիքը փրկելու առաքելությամբ էր եկել Սոնթեն: Նա գալիս էր փրկելու հայի պատիվը, տուրքը տալու բոլոր ժամանակների՝ անցյալի, ներկայի և ապագայի հայությանը, սրբացնելու հայոց հողը», - ասել է ուսանողուհին՝ հավելելով, որ Սոնթեի կյանքը՝ վարք ու բարքով, կենցաղով, դեռ կենդանության օրոք դարձավ խրատ ու առասպել:

թե մրցանակ կամ պատվոգիր ստանալու համար, այլ ձեռք բերած ընկերների կարոտը առնելու, հարազատ մարդկանց տեսնելու համար: Եվ երբ հրավերը եկավ, չնայած աշխատանքային ծանր գրաֆիկիս՝ ես միանգամից մտածեցի, որ առիթը բաց չեմ թողնի, պետք է գնամ և կարոտս առնեմ այն մարդկանցից, ովքեր մի քանի օրում հարազատ դարձան», - ասում է Ալիսիա Դադայանը՝ գոհունակություն հայտնելով ԵՊՀ-ի Մշակույթի կենտրոնից, տնօրեն Կարինե Դավթյանից և նրա աշխատակիցներից, որոնց ջանքերով կյանքի կոչվեց մշակութային բիենալեն և մի հարկի տակ հավաքեց արվեստասեր ուսանողների:

ՌԻՍԱՆՈՂԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Արցախի մայր բուհի հիմնադրման 50-ամյակի և Ուսանողի միջազգային օրվա առթիվ կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ: Հերթականը՝ միջֆակուլտետային ինտելեկտուալ խաղն էր: Արցախյան նախաձեռնել են Արցախի պետական համալսարանի ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը:



Ուսանողուհի Լուիզա Ներսիսյանի խոսքով՝ խաղի նպատակն էր ընդլայնել ուսանողների աշխարհայացքը, զարգացնել գիտելիքները, խթանել մասնագիտական հմտությունների ձեռքբերումը: «Նման մրցույթները ուսանողներին հնարավորություն են տալիս ինտելեկտուալ մակարդակում մրցակցել իրար հետ, ստանալ բազմակողմանի գիտելիքներ, ապահովել օգտակար և հաճելի ուսանողական ժամանակ», - ասել է համալսարանի ՌԻՍ նախագահ Լիլիթ Մարգարյանը՝ հավելելով, որ վերջին շրջանում համալսարանում մեծ զարգացում են ապրում ինտելեկտուալ խաղերը, ինչն ապացուցում է այն, որ ուսանողն այսօր կարևորում է գիտելիքը և կարողանում է մրցել իր գիտելիքներով:



«ԱՐՑԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ	Խմբագիր Զ. Ստառյան	Տպաքանակ 400	Իմացիր քո համալսարանի մասին:
Հիմնադիր «ԱՐՑԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ	Մեր հասցեն Մ. Գոշի 5:	Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում	Այցելիր asu.am կայք:
Հրատարակվում է 1994 թվականից	Հեռ. (047) 94 04 91		www.asu.am

2 ՃՕ՝ ԵՒ ՔՅ ՔԵ՝ ԾՁ Մ



№ 08(222) նոյեմբեր, 2019

ԱՐՑԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАТЦАРАН»

ԿԱՅԱՑԵԼ Է ԱՐՑԱՆԻ ՄԱՅՐ ԲՈՒՀԻ 50-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ



Նոյեմբերի 4-ին ԱՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճում մեկնարկվել է Արցախի մայր բուհի 50-ամյակին նվիրված ուսանողական միջազգային գիտաժողով, որին մասնակցում էին ԱրՊՀ, ՀՀ և արտերկրի բուհերի 150 ուսանող:

Գիտաժողովի լիագումար նիստին ներկա էին ԱՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, ԱՀ պետնախարար Գրիգորի Մարտիրոսյանը, ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, բուհի նախկին ղեկավարներ, համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ, հյուրեր:

Ողջունելով ներկաներին՝ ԱրՊՀ ղեկավար Արմեն Սարգսյանը շնորհավորել է բուհի 50-ամյակի առթիվ՝ ներկայացնելով համալսարանի անցած ճանապարհը, ձեռքբերումներն ու մարտահրավերները:

«Հետադարձ հայացք ձգելով բուհի պատմության ակունքներին՝ վստահաբար կարող ենք ասել, որ այն խիզախումների մի ուրույն ուղի է անցել: Ուղի, որը լի էր ազգային ինքնության և պատմական արդարության հաստատման համար պայքարով», - նշել է ղեկավարը՝ հավելելով, որ մայր բուհը իր կեսդարյա պատմության ընթացքում մշտապես եղել է մնում է Արցախի Հանրապետության հիմնասյուններից մեկը՝ նպաստելով մեր նորանկախ հանրապետության պետականաշինությանը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունել է ԱՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը՝ մաղթելով արդյունավետ աշխատանք:

«50-ամյակը ոչ միայն պատկառելի և գեղեցիկ հորեյան է, այլ նաև անցած ճանապարհը վերաբերելու և ապագայի տեսլականը ուրվագծելու ժամանակ: Կեսադարյա իր պատմության ընթացքում համալսարանը բազմաթիվ մարտահրավերների է առերեսվել: Յուրաքանչյուր տասնամյակ բուհի առջև ծառայած մարտահրավերները տարբեր էին,



տարբեր էին նաև այդ խնդիրները հաղթահարելու հնարավորություններն ու կարողությունները, նույնն էր նպատակը՝ լինել Արցախում գիտակրթական կենտրոն և հայապահպանության օջախ», - նշել է Ա. Ղուլյանը:

Գիտաժողովին ողջույնի խոսքով հանդես է եկել նաև ԱՀ պետնախարար Գրիգորի Մարտիրոսյանը, արժևորել համալսարանի անցած ճանապարհը:

«Արցախի մայր բուհն այսօր դիտարկվում է ոչ միայն հանրապետության մասնագիտական ներուժի հիմնական մատակարարը, այլ նաև գիտակրթական կարևորագույն կենտրոն: Որպես ԱրՊՀ շրջանավարտ և խորհրդի նախագահ՝ գտնում եմ, որ մեր հաջողությունների բանալին ու բանաձևը մշտապես առաջ շարժվելու, տնտեսության պահանջների հետ համաքայլ լինելու մեջ է: Մենք պետք է ունենանք կադրեր, որոնք որակական առումով չեն զիջի արտասահմանյան գործընկերներին, և բոլոր ուղղություններով մենք մեր վճռորոշ խոսքը պետք է ունենանք ոչ միայն Արցախում, այլև ամբողջ աշխարհում: Այդ խոսքի հեղինակն ու ճարտարապետը մայր բուհն է», - ասել է Գ. Մարտիրոսյանը:

ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դեկան, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գագիկ Ղազինյանը շնորհավորել է բուհի 50-ամյակի առթիվ՝ նշելով, որ Արցախն իր բոլոր հաղթանակներով համայն հայության հպարտությունն է, և յուրաքանչյուր հայ իր բոլոր հնարավորություններով պետք է աջակից լինի Արցախին:

Գիտաժողովի մասնակիցներին ողջույնի խոսք է հղել նաև «Նորանկախ պետությունների համալսարանների համագործակցության ասոցիացիա»-ի նախագահ Ստեփան Բերիլը, որը հրապարակել է Մերձդնեստրի պետական համալսարանի ուսանող Յուրի Կասունյանը:

ԱՐՊՅ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԱՌԹԻՎ

Ողջունում եմ բոլորիդ և շնորհավորում Արցախի մայր բուհի 50-ամյա տարեդարձի առթիվ: Մայր բուհը իր կեսդարյա պատմության ընթացքում մշտապես եղել է մնում է Արցախի հիմնասյուններից մեկը՝ որպես գիտակրթական խոշորագույն հաստատություն մպաստելով մեր նորակախ հանրապետության պետականաշինությանը:

Հետադարձ հայացք ձգելով բուհի պատմության ակունքներին՝ վստահաբար կարող եմք ասել, որ այն խիզախումների մի ուրույն ուղի է անցել:

Ուղի, որը լի էր ազգային ինքնության, ազգային արժեքների պահպանման և պատմական արդարության հաստատման համար պայքարով:

Արցախյան շարժման սաղմնավորումից մինչև ընդհատակյա պայքար, զանգվածային հանրահավաքներից մինչև ազատագրական պատերազմ, հետպատերազմյան դժվարությունների հաղթահարումից մինչև տնտեսության և պատերազմից տուժած մյուս ոլորտների վերականգնում, ապրիլյան պատերազմից մինչև երկրի սահմանների ամենօրյա պաշտպանություն. մեր երկրի համար վճռորոշ այս և շատ ու շատ ուղղություններում մայր բուհը իր անուրանալի ավանդն է ունեցել և ունենում, որի համար մեր երկրի յուրաքանչյուր քաղաքացի հպարտանալու լիարժեք իրավունք ունի:

Հպարտանալու առիթ է նաև այն փաստը, որ Արցախի մայր բուհի շրջանավարտները աշխատում են մեր երկրի ամենապատասխանատու պաշտոններում՝ իրենց գիտելիքները ծառայեցնելով ի նպաստ հայրենիքի բարգավաճման:

Սիրելի՛ ուսանողներ, մայր բուհի 50-ամյա-

ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԵԼ ԵՆ ՄԱՍՆԱԽՄԲԵՐՈՒՄ



ԱրՊՅ-ում մեկնարկած միջազգային ուսանողական գիտաժողովի աշխատանքները լիազումար միասին հետո, ըստ առանձին մասնագիտությունների, շարունակվել են 7 մասնախմբում: Բանասիրության, իրավագիտության, պատմության և քաղաքագիտության, տնտեսագիտության, մանկավարժության և հոգեբանության, տեղեկատվական տեխնոլոգիաների և բնագիտության մասնախմբերում կայացած գիտաժողովին մասնակցում էին դասախոսներ, տարբեր համալսարանների ուսանողներ:

Կին նվիրված, ի թիվս մյուս միջոցառումների, ուզում եմ առանձնահատուկ կարևորել այս գիտաժողովը, որը նպատակ ունի բացահայտել գիտական ներուժ ունեցող երիտասարդներին և Արցախում գիտության շուրջ համախմբելով նրանց՝ նոր գաղափարների ու ձեռնարկումների հղացում տալ: Արցախը աշխարհին պետք է ճանաչելի դառնա նաև գիտության միջոցով: Երբ մեր հարևան երկիրը պետական քարոզչամեքենայով լծված է պատմական փաստերի կեղծմանն ու խեղաթյուրմանը, գիտությունը ակադեմիական ազնվություն ունեցող հետազոտողների կարիք ունի, ովքեր ի լուր աշխարհի կփաստեն պատմական ճշմարտություններ: Երիտասարդությունն է այն շարժիչ ուժը, որը նպատակասլացության, ստեղծարար մտքի և աշխատասիրության շնորհիվ կարող է գերազանցել ավագ սերնդին, որովհետև ամեն մի նոր սերունդ իր հաղթանակն է ունենում, իր հաղթանակն է տալիս մարդկությանը: Համոզված եմ, որ այս գիտաժողովի արդյունքում մենք կունենանք գիտահետազոտական այնպիսի աշխատանքներ, որոնք կիրառական նշանակություն կունենան տարբեր ոլորտներում: Վստահեցնում եմ, որ կեսդարյա պատմության ընթացքում ձևավորված բարի ավանդույթները կպահպանենք և, պահպանելով ավանդույթները, բուհի կենսագրությունը կհարստացնենք նորարարությամբ՝ ստեղծելով ժամանակակից պահանջներին համահունչ կրթական համակարգ: Համոզված եմ, գիտաժողովը նոր շունչ կհաղորդի Արցախի գիտակրթական կյանքին: Գիտաժողովին մաղթում եմ արդյունավետ աշխատանք:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 7-ՐԴ ԽԱՂԵՐԻ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐԿԵԼ ԵՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐՈՎ



Նոյեմբերի 19-ին Համահայկական 7-րդ խաղերի կամավորական աշխատանքների պատասխանատու Գրիգորի Սահակյանը հավաստագրերով պարգևատրել է կամավորական աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերած համալսարանականներին:

Հանդիպմանը ներկա էր ԱրՊՅ ՌԷՇՅՅՏԱ գծով

պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, որը կարևորել է կամավորական աշխատանքները՝ նշելով, որ այն Արցախում նոր երևույթ է: Արցախյան շարժման ժամանակ կամավորականության շնորհիվ է ձևավորվել բանակը և նոր սերունդն էլ որդեգրել է այդպիսի դիրքորոշում:

Գրիգորի Սահակյանը շնորհակալություն է հայտնել ԱրՊՅ ղեկավարությանը, աշխատողներին և ուսանողներին իրենց պատրաստակամության, անկեղծ վերաբերմունքի, կատարած անգնահատելի աշխատանքի և աջակցության համար՝ հույս հայտնելով, որ համագործակցությունը շարունակական կլինի:

Համալսարանականները և շնորհակալություն են հայտնել իրենց կատարածը գնահատելու համար՝ վստահեցնելով, որ պատրաստ են ընդգրկվելու մարդասիրական և երկրի զարգացմանը ուղղված կամավորական աշխատանքներին:

ԱՐՊՅ՝ ՏԱՐԿԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՌԻՍԱՆՈՂԸ

Նոյեմբերի 18-ին Արցախի պետական համալսարանում կայացել է «Տարվա լավագույն ուսանող» մրցույթի ներբուհական փուլը: Հաղթող է ճանաչվել տնտեսագիտության ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Գևորգյանը:

Մրցույթի նպատակն է բացահայտել այն ուսանողներին, ովքեր ունեն ուսումնական բարձր առաջադիմություն, գիտահետազոտական հակումներ և ակտիվություն ստեղծագործական, սպորտի և հասարակական կյանքի բնագավառներում: Մրցույթն անց է կացվել հիմք ընդունելով ներկայացված թեկնածուների ուսման առաջադիմությունը, մասնագիտական ձեռքբերումները և հասարակական ակտիվությունը:

ԱրՊՅ ռեկտոր Արմեն Սարգսյանի հրամանով հաստատված մրցութային հանձնաժողովի նիստում ուսումնասիրվել, քննարկվել և թեկնածուների հետ կազմակերպվել են հարցազրույցներ: Հաշվի առնելով մրցույթի անցկացման կարգի պահանջները՝ ուսման առաջադիմությունը, մասնագիտական ձեռքբերումները և հասարակական ակտիվությունը՝ մրցութային հանձնաժողովը առանձնացրել է երեք թեկնածուների՝ Մարիամ Գևորգյանին, Անի Հակոբյանին, Լիլիանա Հայրիսյանին, որոնք աչքի են ընկել նշված բոլոր ուղղություններով: Հանձնաժողովի քննարկման արդյունքում ԱրՊՅ լավագույն ուսանող է ճանաչվել Մարիամ Տիգրանի Գևորգյանը, ով կմասնակցի մրցույթի 2-րդ՝ հանրապետական փուլին:



«Մայր բուհի լավագույն ուսանողի կոչմանն արժանանալը ինձ համար մեծագույն պատիվ է, որին հասել եմ տնտեսագիտության ֆակուլտետի ղեկավարության և պրոֆեսորադասախոսական անձնակազմի համատեղ աշխատանքի շնորհիվ», - նշել է Մարիամ Գևորգյանը:

Մրցութային հանձնաժողովը, հաշվի առնելով բարձր ցուցանիշներ արձանագրած թեկնածուների արդյունքները, հաղթող է ճանաչել Լիլիանա Նվերի Հայրիսյանին՝ «Ուսման առաջադիմություն», Անի Նաիրիի Հակոբյանին՝ «Մասնագիտական ձեռքբերումներ» անվանակարգերում:

ԱրՊՅ ռեկտորը պատվոգրերով և արժեքավոր նվերներով խրախուսել է տարբեր անվանակարգերում հաղթած և լավագույն ճանաչված ԱրՊՅ ուսանողներին:

ԿՈՎԿԱՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ, ՔԱՂԱՔԱԳԵՏ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԻՍԿԱՆՂԱՐՅԱՆԸ ԱՐՊՅՈՒՄ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՄ

Նոյեմբերի 6-ին Արցախի պետական համալսարանում դասախոսությամբ հանդես է եկել Կովկասի ինստիտուտի տնօրեն, քաղաքագետ Ալեքսանդր Իսկանդարյանը: Դասախոսության թեման էր «Հեղափոխության տեսությունը, տեսակները և հետևանքները», որին ներկա էին ԱրՊՀ գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ:



Պրոռեկտորը ողջունել է հյուրին, շնորհակալություն հայտնել համալսարան այցելելու և դասախոսությամբ հանդես գալու համար՝ կարևորելով Կովկասի ինստիտուտի ակտիվ համագործակցության արդյունքում իրականացվող ծրագրերի արդյունավետությունը:

Ալեքսանդր Իսկանդարյանը ներկայացրել է «Հեղափոխություն» եզրույթի ծագումը, կիրառումը, համեմատել ռեֆորմի հետ՝ ընդգծելով նմանություններն ու տարբերությունները:

Նա նշել է, որ տարբեր մասնագետներ տարբեր կերպ են ընկալում և բացատրում հեղափոխությունը: «Հեղափոխություն ասելով մեր օրերում, ինչպես հասարակական-քաղաքական, այնպես էլ մարդկա-

յին գործունեության մնացած ոլորտներում, հասկանում ենք արմատական և որակական փոփոխություններ, մի վիճակից անցումը բոլորովին նոր՝ նախորդից էականորեն տարբերվող կարգավիճակի», - ասել է քաղաքագետը:

Քաղաքագետը նաև շեշտել է, որ հեղափոխության համար կան պարտադիր հանգամանքներ, որոնցից ամենակարևորը ժողովրդավարության որոշակի աստիճանի առկայությունն է:

Ալեքսանդր Իսկանդարյանը պատասխանել է նաև ներկայների հարցերին:

«ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑԸ ՉՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՀԱՐԿՈՒՄ, ԱՅԼ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀ». ԱՐԹՈՒՐ ԴԱԶԻՆՅԱՆ



Նոյեմբերի 4-ին Արցախի պետական համալսարանում դասախոսությամբ հանդես է եկել Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն Արթուր Ղազինյանը: Դասախոսության թեման էր «Միջազգային իրավունք և հակամարտություն», որին ներկա էին ԱրՊՀ գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը, դասախոսներ, ուսանողներ:

Պրոռեկտորը, ողջունելով հյուրին, շնորհակալություն է հայտնել համալսարան այցելելու և դասախոսությամբ հանդես գալու համար:

Արթուր Ղազինյանը խոսել է հայոց պետականության ձևավորման հարցում Արցախի ունեցած դերից, արցախյան հակամարտության կարգավորումից: Նա ընդգծել է, որ Արցախը Հայաստանի 3-րդ

Հանրապետության ձևավորման հիմքն է, գերակա ուժը:

«Արցախյան հարցը չպետք է լինի քաղաքական շահարկում, այլ ազգային գերակա շահ, որի ընկալումը պետք է նստած լինի յուրաքանչյուրի մտքում և գործողությունների հիմքում պետք է լինի այդ շահերին ծառայելը, սպասարկելը և պաշտպանությունը ամբողջ աշխարհում», - ասել է բանախոսը:

Արթուր Ղազինյանը, անդրադառնալով դարաբաղյան հակամարտության կարգավորմանը, խոսել է ստեղծված իրավիճակից դուրս գալու հնարավորություններից՝ նշելով, որ միջազգային իրավունքով կա 2 հիմնական կոնցեպտ՝ տարածքային ամբողջականություն և ազգերի ինքնորոշում:

Նա ընդգծել է, որ Արցախ-Հայաստան պայմանական պետական հիմքի վրա բաժանումը ռազմավարական, ստրատեգիական նշանակության ճանապարհ է՝ հավելելով, որ ընտրված է հետևյալ ճանապարհը՝ հասնել ազգերի ինքնորոշման սկզբունքի հիմքի վրա ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչմանը: «Արցախի ժողովուրդը ունի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչման իրավունք, որը նախևառաջ պետք է ճանաչի Ադրբեյջանի իշխանությունը», - նշել է բանախոսը:

ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նոյեմբերի 5-ին «Մատենադարան-Գանձասար» գիտամշակութային կենտրոնում տեղի ունեցավ Արցախի մայր բուհի 50-ամյակին նվիրված ուսանողական միջազգային գիտաժողովի փակման հանդիսավոր արարողությունը, որի ընթացքում ԱրՊՀ կողմից հավաստագրեր հանձնվեցին գիտաժողովի մասնակիցներին:

Շնորհակալություն հայտնելով գործընկեր բուհերի ղեկավար կազմերին և գիտաժողովին մասնակից բոլոր ուսանողներին՝ ԱրՊՀ ղեկավար, ամփոփելով գիտաժողովի արդյունքները, իր գոհունակությունն է հայտնել ընթացքից և նշել, որ 200-ից ավելի ներկայացրած հայտերից գիտաժողովին մաս-



Ընդարձակ ելույթով հանդես է եկել ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը՝ ներկայացնելով ոլորտի արդիական հարցերը, ԱրՊՀ կառուցվածքը, զարգացման հեռանկարները, ուսանողական կառույցների աշխատանքի կազմակերպումը:

Մասնակից ուսանողները ևս հանդես են եկել ելույթներով՝ ներկայացնելով իրենց բուհերի առանձնահատկությունները:

Ամփոփելով երկօրյա գիտաժողովի արդյունքները՝ մասնակիցները կիսել են իրենց տպավորությունները:

«Անչափ կարևոր են համարում այս գիտաժողովի աշխատանքները: Այս անգամ գիտությունը մեզ բե-

նակցելու իրավունք է ստացել 150-ը, որին ընտրել է հանձնաժողովը՝ ըստ նախապես ուղարկված զեկուցումների:

Կարևորելով գիտաժողովի նշանակությունը՝ ղեկավարը ընդգծել է միջբուհական գործակցության անհրաժեշտությունը նաև ուսանողական գիտաժողովների ձևաչափով, ինչին, նրա խոսքով, միտված էր այս գիտաժողովը, որի արդյունավետությունը փաստեցին նաև մասնակիցները:

«Բուհի որդեգրած առաքելությունը ոչ միայն լավ մասնագետներ պատրաստելն է, այլ նաև նպաստելը ակտիվ կենսադիրք, լիարժեք ու արժանի քաղաքացի ձևավորելուն: Բուհի կողմից կազմակերպվող յուրաքանչյուր միջոցառում պետք է ծառայի այդ առաքելությանը», - ասել է ղեկավարը՝ հավելելով, որ ոգևորիչ է գիտաժողովին մասնակցության հայտ ներկայացրածների թիվը, ինչը փաստում է գիտության հանդեպ ուսանողների ցուցաբերած մեծ հետաքրքրությունն ու ձգտումը:

«Մատենադարան-Գանձասար» գիտամշակութային կենտրոնի տնօրեն Արամ Թորոսյանն իր հերթին ողջունել և շնորհավորել է Արցախի Մայր բուհի հիմնադրման 50-ամյակի կապակցությամբ և կարևորել միջազգային գիտաժողովների անցկացումն Արցախում:

Հավաստագրերի հանձնման արարողությանը հաջորդել է «Բարձրագույն կրթության արդի հիմնախնդիրները» թեմայով ուսանողական ֆորումը:



րեց Արցախ: Շնորհակալ են ընձեռած հնարավորության համար: Ես մասնակցել եմ տարբեր գիտաժողովների: Այս գիտաժողովը կազմակերպված էր բարձր մակարդակով», - մասնավորապես նշել է ԵՊՀ ուսանող Սամվել Եղիազարյանը:

«Այս գիտաժողովը ինձ հնարավորություն տվեց մտնել գիտության մի նոր աշխարհ, Արցախը մի նոր տեսանկյունից բացահայտելու», - նշել է Գորիսի պետական համալսարանի ուսանողուհի Եմիլյա Խաչատրյանը:

«Ոչ միայն նոր գիտելիքներ ձեռք բերեցինք, այլ նաև նոր ընկերներ, հաճելի համատեղեցինք օգտակարի հետ», - ասել է ՀՈՀ ուսանող Սիքայել Արշակյանը:

Ուսանողները շրջել են նաև Գանձասարի վանական համալիրում, կատարել մոմավառություն:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ ԱրՊՅ ՌԵԿՏՈՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ



Նոյեմբերի 18-ին Ուսանողների միջազգային օրվա առթիվ Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանի հրամանով պարգևատրվել են մի խումբ ուսանողներ:

Պատվոգրերով և մասնագիտական գրքերով պարգևատրվել են «Տարվա լավագույն ուսանող», «Դատախաղ» և Ուսանողի միջազգային օրվա կապակցությամբ անցկացված մրցույթներում «Լավագույն գեղանկար», «Լավագույն լուսանկար», «Լավագույն թղթակից», «Սեղանի թեմիս», «Ինտելեկտուալ մրցույթ», «Հրաձգություն» անվանակարգերում հաղթող ճանաչված, ուսման բարձր առաջադիմություն և պատշաճ վարքագիծ դրսևորած, ներհամալսարանական և արտահամալսարանական ակտիվ գործունեություն ծավալած, հասարակական բարձր ակտիվություն ցուցաբերած, ուսանողական ինքնավար կառույցների աշխատանքը լավագույնս կազմակերպած, ուսումնագիտական, մշակութային, մարզական տարաբնույթ միջոցառումներին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ուսանողները:

Համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանը պրո-

ֆեսորադասախոսական կազմի անունից շնորհավորել է ուսանողներին տոնի առթիվ՝ մշելով, որ ներկայումս աշխարհում բարձրագույն կրթության բնագավառում մեծ բարեփոխումներ են կատարվում, որոնց հիմնական սկզբունքներից մեկը միտված է ուսանողակենտրոն համալսարանների կայացմանը: Ռեկտորը նաև ընդգծել է, որ վերջին տարիներին ուսանողները ակտիվ մասնակցում են համալսարանի բոլոր աշխատանքներին:

Օրվա առթիվ շնորհավորանքի խոսքեր են ասել նաև պրոռեկտորները՝ կարևորելով ուսանողների ունեցած դերը երկրի տարբեր բնագավառների զարգացման գործընթացում:

Համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ Լիլիթ Սարգսյանը և շնորհավորել է ուսանողներին օրվա առթիվ՝ մաղթելով անսպառ եռանդ, գիտելիքների հարուստ պաշար, մասնագիտական ձեռքբերումներ և հաջողություններ ուսման բնագավառում: «Ուսանողներիս հիմնական առաքելությունը կրթությունն է և մեր պարտքն է մեր գիտելիքներով նպաստել մեր երկրի բարօրությանը»:



ԱրՊՅ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍԱՆՈՂԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ ուսանողներ, ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ Ուսանողների միջազգային օրվա առթիվ: Ուսանողական կյանքը լավագույն ժամանակահատվածն է գիտելիքներ, հմտություններ և կարողություններ ամբարելու համար: ԱրՊՅ-ում պարբերաբար քայլեր են ձեռնարկվում այդ ամենի համար նպաստավոր պայմաններ ապահովելու նպատակով: Իր կեսդարյա պատմության ընթացքում միշտ էլ Արցախի մայր բուհը իր ուսանողների հաջողություններով եղել ու է Արցախի Հանրապետության առաջատար գիտակրթական հաստատությունը:

Հպարտանալ կարող է յուրաքանչյուր համալսարանական այն փաստով, որ մեր բուհը

լավագույն մասնագետներ է տվել հանրապետության բոլոր բնագավառներին, և յուրաքանչյուրը յուրովի իր նպաստն է բերում երկրի շենացմանը: Համոզված եմ, որ դուք, ձեր ուսումնառության ժամանակը արդյունավետ օգտագործելով, կդառնաք լավ մասնագետներ և կլինեք այդ լավագույնների շարունակողը:

Սիրելի՛ ուսանողներ, մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիդ և հորդորում, որ ուսումնառության տարիների ամեն մի օրն օգտագործեք ի շահ ձեր մտավոր ներուժի ու կարողությունների զարգացման: Մաղթում եմ խաղաղություն, անձնական ու համազգային իղձերի իրականացում և հաջողություններ:

ԿԱՅԱՑԵԼ Է ԱրՊՅ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍ

Նոյեմբերի 29-ին Արցախի պետական համալսարանում կայացած գիտխորհրդի նիստում քննարկվել են ուսումնական գործընթացը, Համահայկական մարաթոնին ԱրՊՅ ունեցած մասնակցությունը և մի շարք այլ հարցեր:

Օրակարգային առաջին հարցով ֆակուլտետների ղեկավարները ուսումնական գործընթացի մասին հաշվետվություն են ներկայացրել՝ մշելով, որ ընթացիկ աշխատանքները բնականոն հունի մեջ են:

Հաջորդիվ գիտխորհուրդը տպագրության է երաշխավորել «ԱրՊՅ գիտական տեղեկագրի» հերթական համարը:

ԱրՊՅ ռեկտոր Արմեն Սարգսյանը գիտխորհրդին է ներկայացրել օրակարգի մյուս՝ Համահայկական մարաթոնին ԱրՊՅ մասնակցության մասին հարցը՝ մշելով, որ համալսարանը միշտ գործում մասնակցություն է ունենում մարաթոնին:

ԱրՊՅ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության զեկույցի պատրաստման մասին հարցը ներկայացրել է որակի ապահովման կենտրոնի վարիչ Հասմիկ Մինասյանը՝ ընդգծելով, որ այդ ուղղությամբ կայացած քննարկումների նպատակն է



հանրայնացնել աշխատանքային խմբերի կատարած ինքնավերլուծությունները և հնարավոր բացթողումների դեպքում հաշվի առնել քննարկման մասնակիցների հիմնավորված կարծիքները: Նա նաև հավելել է, որ կենտրոնը կատարում է ուսանողների և դասախոսների հարցումներ՝ նրանց տեքստային, թվային և գրաֆիկական վերլուծությունները զեկույցին կցելու նպատակով:

Գիտխորհուրդը տպագրության է երաշխավորել մեկ մենագրություն, կողմ քվեարկել գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի ավագ դասախոս Զարինե Սառաջյանին դոցենտի կոչում շնորհելու և այն ՀՀ ԲՈԿ-ի վավերացմանը ներկայացնելու հարցին:

«ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ԱրՊՅ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵԼ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ



Նոյեմբերի 15-ին «Մատենադարան-Գանձասար» գիտամշակութային կենտրոնում «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի հիմնադրամի և Արցախի պետական համալսարանի միջև կնքվել է համագործակցության հուշագիր: Հանդիսավոր արարողությանը ներկա էին ԱՀ նախագահ Բակո Սահակյանը, Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, պաշտոնատար այլ անձինք:

ԱրՊՅ ռեկտոր Արմեն Սարգսյանը, ողջունելով ներկայներին, կարևորել է հուշագրի կնքումը՝ ընդգծելով, որ այն նպաստելու է Արցախի մայր բուհի գիտակրթական կյանքի զարգացմանը: Նա շնորհակալություն է հայտնել Վահան

Տեր-Ղևոնդյանին Արցախի մայր բուհի հետ համագործակցելու համար՝ մշելով, որ բուհի համագործակցությունը Մատենադարանի հետ տասնամյակների պատմությունն ունի:

Իր հերթին Մատենադարանի տնօրեն Վահան Տեր-Ղևոնդյանը, կարևորելով հուշագրի կնքման անհրաժեշտությունը, ընդգծել է, որ մինչ հուշագրի կնքումը երկու կառույցների միջև առկա էր համագործակցությունը, սակայն հուշագրով այդ գործակցությունը նոր փուլ է մտնում:

Հաշվի առնելով, որ թե՛ Մատենադարանը, թե՛ ԱրՊՅ-ն շահագրգիռ են ինչպես միմյանց, այնպես էլ աշխարհի հայագիտական կենտրոնների հետ գիտական կապերի ու հարաբերությունների ամրապնդմամբ ու խորացմամբ, երկու կառույցները համագործակցելու են գրադարանային ստորաբաժանման փոխգործակցության, մասնագետների նպատակային փոխայցելությունների, համատեղ գիտաժողովների, գիտական հետազոտություն իրականացնելու նպատակով ձեռագիր, արխիվային և տպագիր ֆոնդերից օգտվելու հնարավորության ընդունման և այլ անհրաժեշտ ուղղություններով: